ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«15» 03 2019թ.
N 18-Հ

ՀՀ ՏԶՆՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ

«15» 03 2019թ.
N 18-Հ

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

Կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենը և ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեն, ի կատարումն ՀՀ Կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի N1500-ՆԳ որոշման, ղեկավարվելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ Կառավարության 2018թ. հունիսի 15-ի «Բյուջեների կատարման» կարգի 38-րդ կետի պահանջներով՝ ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեին կառավարական քաղաքային հեռախոսակապով ապահովելու և սպասարկելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեին մատուցում է կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ (այսուհետ՝ «Ծառայություններ»), իսկ ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեն վճարում է այդ Ծառայությունների դիմաց՝ սույն համատեղ հրամանով սահմանված կարգով:
2. Սույն համատեղ հրամանով նախատեսված պահանջները տարածվում են կողմերի միջև 2019թ. հունվարի 01-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

3. **ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.**

1) Ծառայությունների որակյալ, անխափան մատուցումը և սույն համատեղ հրամանով նախատեսված պարտավորությունների կատարումը,
2) Կապի միջոցների անխափան աշխատանքը և վնասվածքների ժամանակին վերացումը,
3) ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեում տեղադրված կապի միջոցների և բաժանորդային գծի անվտանգությունն ապահովող հատուկ միջոցառումներ՝ գաղտնի տեղեկատվության արտահոսքը կանխելու նպատակով,
4) Կառավարական կապի միջոցների տեղադրումը, վերատեղադրումը և ծառայությունների մատուցումն ու դրանց հետ կապված աշխատանքների կատարումը՝ ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից վճարման պարտավորության մասին գրավոր հայտ ներկայացնելուց հետո,
5) Կառավարական քաղաքային հեռախոսակապի անջատումը, եթե ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեն չի կատարում Ծառայությունների դիմաց ամենամսյա բաժանորդային վճարումը՝ ըստ սույն համատեղ հրամանի 4-րդ կետի 4) և 5) ենթակետերի:

4. **ՀՀ ՏԶՆՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.**

1) ՀՀ ազգային անվտանգության ծառայության կապի հանգույցից մինչև իր աշխատասենյակները առանձին մալուխային գծի շարքից դուրս գալու դեպքում վերանորոգման աշխատանքների ծախսերը՝ ըստ կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների,
2) Կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների կատարումը և այն աշխատասենյակների պահպանումը, որտեղ տեղադրված են այդ միջոցները,
3) Իր մոտ տեղադրված կապի միջոցների պահպանումը,
4) Ծառայության դիմաց բաժանորդային նախորդ ամսվա վարձի վճարումը՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ ամսվա 10-ը՝ համաձայն ՀՀ Կառավարության 22.09.2011թ. N1500-ՆԳ որոշման: Վճարումները կատարվում են ՀՀ դրամով:

№	ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԸ	Կառավարական քաղաքային կապ	Ընդամենը
1.	ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի աշխատասենյակ	1 x 225 000	225 000
2.	կապի անվտանգությունն ապահովող հատուկ ծառայություններ	1 x 100 000	100 000
3.	ընդամենը տարեկան վարձը		325 000
			երեք հարյուր քսանհինգ հազար դրամ

5) Բաժանորդային վճարումների փոխանցումը ՀՀ ազգային անվտանգության ծառայության հաշվարկային հաշվին՝ ոչ ուշ, քան եռամսյակը մեկ,

6) Իր մոտ տեղադրված հատուկ կապի միջոցների վերադարձը ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ տեխնիկապես սարքին վիճակում՝ Ծառայության մատուցումների վերջնական դադարեցումից անմիջապես հետո,

7) ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պատկանող կապի միջոցների արժեքի փոխհատուցումը՝ ըստ կազմված համապատասխան ակտի, եթե դրանք կորստի են մատնվել իր մեղքով:

5. Ուժը կորցրած համարել ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի 15.12.2011թ. N80-Ա համատեղ հրամանը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն

_____ **Ա. Վանեցյան**

ք. Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների
բյուջեների հաշվառման բաժին
h/h 900018301011
հվհհ 01507079

Կ.Տ.

ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահ

_____ **Ն. Բաբայան**

ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ Ֆին. նախ.գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների բյուջեների
հաշվառման բաժին
h/h 900011145027
հվհհ 02528489

Կ.Տ.

Տեղեկատվական անվտանգության և կառավարական կապի գլխավոր վարչություն _____ հեռախոս՝ 1-99